ՄՇԱԿՈՒՅԹ

ՍԻԼՎԻԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
«Հայաստանի ազգային
պատկերասրահ» ՊՈԱԿ,
Գևորգ Գրիգորյանի /Ջոտտո/
թանգարան-արվեստանոց,
էքսկուրսավար
(արվեստաբան)

ՀՏԴ 75

ԲՆԱՆԿԱՐԻ ԺԱՆՐԸ ԽԱՉԱՏՈՒՐ ԵՍԱՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Բանալի բառեր. բնանկար, եվրոպական, ճարտարապետական, հուշարձան, քաղաքային, կերպարվեստ, թափանցիկություն, իմպրեսիոնիստ:

Ключевые слова: пейзаж, европейский, архитектурный, памятник, городской, изобразительное искусство, прозрачность, импрессионист.

Key words: landscape, European, architectural, monument, urban, fine art, transparency, impressionist.

Խաչատուր Եսայանը (1909-1977) 20-րդ դարի հայ գեղանկարչության անվանի արվեստագետներից է, նկարիչ, որն ունի իր միանգամայն առանձնահատուկ ստեղծագործական դեմքը: Կարսում ծնված, Երևանի գեղարվեստա-արդյունաբերական տեխնիկումում ուսանած նկարիչը հարստացրել է բնանկարի ժանրն իր նոր նվաճումներով: Չնայած Եսայանի բավական տպավորիչ, հետաքրքիր ու հանդիսավոր, բարձր ճաշակով արված, ժամանակաշրջանի շունչը վերարտադրող թատերական ձևավորումներին, նկարիչն ավելի շատ նախապատվությունը տվել է բնանկարին: Նրա արվեստի ակնառու ուժն ամենից հուժկու զգացվում է այս ժանրի աշխատանքներում, նրա տաղանդն առավել դրսևորվել է հենց այս ասպարեզում: Մի ամբողջ կյանք նվիրելով բնանկարին, նա վերջինիս միջոցով բացահայտել է իր գաղափարագեղարվեստական խնդիրները:

Պետք է նշել, որ Եսայանը հանդիսանում է քաղաքային բնանկարի հիմնադիրներից մեկը խորհրդահայ կերպարվեստում: Շնորհալի նկարիչն իր բնապատկերներում ներկայացրել է ոչ միայն հայրենի, այլև այլ նաև՝ եվրոպական բնության հրաշագեղ տեսարանները:

Այսպիսով, Եսայանի բնանկարները կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) Հայաստանի բնությունը պատկերող բնանկարներ, բ) եվրոպական ճանապարհորդությունների ընթացքում ստեղծված բնանկարներ:

Որպես թատերական նկարիչ և գեղանկարիչ Եսայանն արվեստում իրեն սկսեց դրսևորել 1930-ականների վերջից: Որպես բնանկարիչ նա ձևավորվել է կերպարվեստի շրջիկ արվեստանոցի ստեղծագործական արշավախմբերում[1], աշխատելով Հայաստանի գեղատեսիլ վայրերում: Նրա ստեղծագործական կյանքն ընդգրկում է 4 տասնամյակ՝ 1930-ականների վերջից մինչև մահը՝ 1977-ը:

Եսայանի արվեստը սնվել է Ե. Թադևոսյանի ավանդույթներով: Թադևոսյանի նման Եսայանը կարողացել է մերձենալ իմպրեսիոնիզմի սկզբունքներին: Նա վերցրել է Թադևոսյանի արվեստի բնորոշ մի շարք գծեր: Թադևոսյանի պես նա ունի խոր զունազգացողություն, նրա բնանկարներն էլ Թադևոսյանի գործերի նման աչքի են ընկնում զրնգուն գույներով, անմիջական վերարտադրությամբ: Եսայանի գործերում որոշ առումով առկա է և Ս. Առաքելյանի գունային ներկապնակի ազդեցությունը[2]: Այս երկու նկարիչների աշխատանքներն էլ տոգորված են բանաստեղծական տրամադրություններով:

Եսայանի մի շարք հրաշագեղ բնանկարներ իմպրեսիոնիստական բնույթի են: Նա ձգտում է թրթռուն օդայնության և գույնի լուսապատկերային մաքրության[3]: Ահա Եսայանի արվեստին բնորոշ այն հատկությունները, որոնք նրա բնանկարները մոտեցնում են իմպրեսիոնիստների գործերին: Նկարչի մի շարք բնապատկերներում նկատվում է իմպրեսիոնիստներին հատուկ թափանցիկություն, լույսի ու ստվերի յուրօրինակ ներդաշնակություն: Իր լավագույն բնանկարներում նա ֆրանսիացի իմպրեսիոնիստների, հատկապես Կլոդ Մոնեի պես կարողացել է հաղորդել տերևների սոսափյունը, ջրի վրա հակվող ծառերի մեղմիկ ռիթմը: Ինքը՝ նկարիչը, բազմիցս նշել է, որ իրեն հիացնում է Կլոդ Մոնեի ստեղծագործությունը, բայց նա ոչ թե կրկնօրինակել, այլ ընթացել է իր սեփական ուղիով:

Եսայանի բնանկարիներին հատուկ է տպավորության անմիջականությունը: Այդ բնանկարները աչքի են ընկնում թարմությամբ, հնչեղ գունային նրբերանգներով, դրանք լի են լույսով: Եսայանի բնանկարների մեծ մասին բնորոշ են մանր, մասնատված վրձնումները:

---

[1] Շարժական ցուցահանդեսների արվեստանոցը կազմակերպվել է 1939-ին՝ նկարիչ Գ. Գյուրջյանի նախաձեռնությամբ:

[2] Սակայն Առաքելյանի կտավները, ի տարբերություն Եսայանի գործերի՝ ավելի գունագեղ են, նա ավելի շատ է նախընտրել աշխատել վառ գույներով:

[3] **Гюрджян Г.**, Зрелость - <<Литературная Армения>>, Ереван, 1959, № 5, стр. 112.

Եսայանի՝ Հայաստանի բնությունը պատկերող բնանկարները 2 տեսակի են՝ ա) քնարական, ինտիմ, կամերային բնույթի՝ արված թրթռուն իմպրեսիոնիստական տեխնիկայով, բ) մոնումենտալ հնչողությամբ բնանկարներ: Սակայն պետք է նշել, որ մեր կարծիքով, Եսայանը որպես բնանկարիչ իրեն առավել հաջող դրսևորել է կամերային, քան մոնումենտալ բնույթի բնանկարներում: Նա ինտիմ, կամերային բնույթի բնանկարների լավագույն ներկայացուցիչներից մեկն է հայ կարպարվեստում:

Եսայանի՝ Հայաստանի բնությունը պատկերող իմպրեսիոնիստական, օդով լցված բնանկարներն աչքի են ընկնում թարմ շնչով, երանգավորման նուրբ զգացումով, թափանցիկությամբ, մեղմությամբ, լիրիկականությամբ: Իր՝ Հայաստանի բնությունը պատկերող բնանկարներում Եսայանը ներկայացրել է Աշտարակի, Բյուրականի գողտրիկ անկյունները, Նորքի այգիները, Մասիսի վեհանիստ կերպարը, Արարատյան դաշտը, Արագածը, Սևանը, Արզնին, Գառնին…: Ինչպես նշել է Ռ. Հովհաննիսյանը. «Թվում է, թե բնությանը սիրահար մի երիտասարդ բանաստեղծ է վերարտադրել այդ բնանկարները, շնչավորել, վրձնի թեթև, սակայն զգայուն թրթիռով նոր կյանք տվել դրանց»[4]: Եսայանը դիտողին է փոխանցել բանաստեղծական այն զգացմունքները, որոնք նրա մեջ առաջացել են հայրենի բնության իր սիրած կերպարներից:

Ներկայացնենք Եսայանի քնարական զգացումներով ջերմացած բնանկարները: Ահա դրանցից մեկը՝ <<Աշուն>> կտավը (1946): Հայաստանյան ոսկեշող աշնան տիպիկ օրինակ է՝ ներկայացված նրբությամբ ու գեղարվեստորեն: Կտավն աչքի է ընկնում իր կատարման վիբրացիոն տեխնիկայով, թեթև, օդալից տարածությամբ, գունային խաղով: Մասնատված վրձնահարվածներն ստեղծում են օդի թրթռունության պատ-րանք: Կտավին բնորոշ է գունային նրբերանգների թափանցիկ ու խոսուն ներդաշնակությունը. առաջնամասի տաք գույները հիանալի կերպով համադրված են ետնամասի գույների հետ: Նկարիչն այս նկարում ներդրել է իր հոգին, հայաստանյան բնության հանդեպ իր ողջ սերը: Այսպիսով, Եսայանն այս կտավում օդով հագեցած, նրբերանգներով հարուստ մթնոլորտ է ստեղծել:

<<Կեսօր>> աշխատանքը (1946) իմպրեսիոնիստական պայծառ, թարմ գույներով է հագեցած: Ներկայացված են վեր խոյացող արտասովոր ծառեր՝

[4] **Հովհաննիսյան Ռ.**, Հայրենի բնության գովերգուն - <<Սովետական Հայաստան>>, Երևան, 1959, 13 հոկտեմբերի, էջ 4:

իրենց թավշյա կանաչ տերևներով: Աշխատանքն արված է մասնատված, խաղացկուն վրձնահարվածներով: Վալյորային երփնագրությունը, ճյուղերի մեղմիկ ռիթմն առանձնահատուկ են դարձնում այս բնանկարը: Ծառերի տակ նստած կնոջ դեմքը Եսայանը խուսափել է նկարել: Գետինը նր-բերանգված է դինամիկ վրձնահարվածներով արված բազմագույն բծերով, որոնք ստեղծում են յուրօրինակ ռիթմ: Բնանկարն իր գուներանգներով, հորինվածքային լուծմամբ արթնացնում է զգացմունքներ, ջերմացնում դիտողի սիրտը:

Հայաստանի բնությունը պատկերող ուշագրավ աշխատանքներից է <<Արզնիի բնանկարը>> (1940-ական թթ.): Նկարը տպավորիչ է իր դինամիկ հորինվածքով, կոմպոզիցիոն ներքին շարժումով: Կոլորիտը լուծված է սառը գույներով: Բնանկարում աչքի են զարնում զբոսայգու կենտրոնական հատվածում պատկերված, աղոտ նշմարվող մարդկային երեք ֆիգուրները, որոնք շաղկապված են բնության հետ: Այս նկարում գերիշխում են հովասուն ծառերի պատկերները՝ կատարված կոմպոզիցիայում դոմինանտ հանդիսացող գույնի՝ կանաչի տարբեր թույրերով՝ երանգավորված լույսի ազդեցության տակ: Այս, ինչպես նաև Արզնիի փթթուն, գեղատեսիլ բնությունը պատկերող մեկ այլ՝ <<Զբոսայգում. Արզնի>> (1975) բնանկարում զգացվում է Կլոդ Մոնեի բնանկարների ազդեցությունը:

<<Զբոսայգում. Արզնի>> աշխատանքն իր այգու փարթամ, կանաչ ծառերով, գունային թարմությամբ է մեզ հիշեցնում Կլոդ Մոնեի մի շարք բնանկարները: Թարմ գույներով արված այս բնանկարը կատարված է հեռանկարչական հստակ կանոններով: Հեռվում ներկայացված փոքրիկ կառույցը շատ լավ է մտահղացված: Այն հորինվածքային լրացում է, խորացնում է հեռանկարային տարածությունը: Բնանկարի մի անկյունում պատկերված են նստարանին նստած երեք կանայք, որոնք իրենց հանգիստն են վայելում բնության գրկում՝ ծառերի զով ստվերի տակ:

Թափանցիկ ու նուրբ գույների վետվետուն խաղով ստեղծված, լավատեսական ու բանաստեղծական մի պատկեր է <<Բնանկար. Մայիս>> աշխատանքը (1954): Կտրուկ, խաղացկուն վրձնահարվածներով, անհանգիստ գծանկարով արված այս աշխատանքում Եսայանը ներկայացրել է բնության մի փոքրիկ հատված: Նա իր ողջ ուշադրությունը կենտրոնացրել է ծառերի պատկերների վրա՝ դրանց միջոցով ստեղծելով գարնան այդ ամսվա կերպարը: Տեսարանին միաձուլվել է կանաչ տանիքով սպիտակ կառույցը՝ դիտված ծառերի արանքից, զբաղեցնելով նկարի մի անկյունը: Բնանկարում հատկապես աչքի են ընկնում ստվերները, որոնք նկարիչը հիանալի է բաշխել: Գունային համակարգում իշխում է բաց վարդագույնը:

Հայաստանի գարնանային բնության զարթանքի պատկերն է ներկայացնում մեկ այլ քնարական բանկար՝ <<Աշտարակն է հեռվում>> աշխատանքը (1959): Այստեղ բնությունը շնչում է գարնան բույրով, փայլում իր հեքիաթային գեղեցկությամբ: Մարդու աշխարհն ու բնության աշխարհն այստեղ կապված են անհետեսանելի մի կապով[5]: Թարմ կոլորիտը լուծված է վարդագույնի, երկնագույնի, կանաչի, դեղինի երանգներով: Հորինվածքի կենտրոնական հատվածում երևացող մատղաշ, բարալիկ ծառերն իրենց նուրբ վարդագույն ճյուղերով լավ են ներդաշնակվում հորիզոնում երևացող, նրբորեն գծագրված լեռների և երկնքի կապույտի հետ:

Իմպրեսիոնիստական մեկ այլ աշխատանք՝ <<Ծիրանի ծառ»>> ստեղծագործությունը (1976) տեղի ընտրությամբ ու բնաշխարհի զուսպ ընդգրկումով հանդիսանում է նկարչի ամենապարզ բնանկարներից, որում պատկերի մեծ մասն զբաղեցնում են իրենց կենսատու արմատները մայր հողում տարածած ճկուն ծառերը, մնացածը՝ ամպերով քողարկված երկինքը: Համարձակ վրձնահարվածներով արված այս բնանկարում ծիրանենիները միաձուլվել են իրար, դարձել մեկ ամբողջություն՝ տարածելով իրենց ծաղկած ճյուղերը: Ծիրանենիների ծաղկաթերթերն ասես ձուլվել են ամպերին, հալվել օդում:

Խաչատուր Եսայանը Հայաստանի բնությունը պատկերող մի քանի բնանկարներում ձգտել է դուրս գալ քնարական նրբության սահմաններց և ստեղծել է էպիկական, մոնումենտալ-դեկորատիվ բնույթի գործեր: Դրանցում պատկերված առարկաները ստացել են հոծ զանգված ու կշիռ, հորինվածքում գերակշռում են արտառոց ժայռերի մոնումենտալ զանգվածները, և ինչպես իրավացիորեն նկատել է նկարիչ Գ. Գյուրջյանը, այդ ծանրաքաշ հսկաները Եսայանի վրձնի համար անսովոր և խորթ են թվում[6]:

1940-ականներին կատարված <<Արզնիի ձորը>> բնանկարը կարելի է դասել նկարչի մոնումենտալ հնչողությամբ գործերի շարքին: Արզնու լեռնային ձորի այս վիպերգական բնանկարում անմիջապես աչքի է ընկնում սլաքի նման աղմկալից վազող Հրազդան գետը, որը մեջտեղում ճեղքելով ձորը, հորինվածքը բաժանում է երկու հավասար մասերի: Ոլորուն գետը, թեպետ զբաղեցնում է փոքր տարածություն, սակայն շարժում, դինամիզմ է մտցնում կոմպոզիցիայում: Բնանկարի հորինվածքը մասերի այնպիսի հարաբերակցությամբ է կառուցված, որ դիտողի հայացքը նախ

[5] **Езерская Н.**, Пейзажи Х. Есаяна - <<Искусство>>, Москва, 1960, № 11, стр. 46

[6] Տե՛ս **Գյուրջյան Գ.**, Տաղանդավոր բնանկարիչը - <<Սովետական Հայաստան>> Երևան, 1959, № 9, էջ 27:

կենտրոնանում է գետի, ապա սևեռվում լեռնային ձորի պատկերի վրա: Կտավն աչքի է ընկնում ֆորմաների միաձուլությամբ: Ձորն իր շրջակայքով պատկերված է դեղնականաչավուն երանգներով, որոնք ներդաշնակորեն համադրված են գետի կապտասպիտակավուն գույնի հետ:

1950-ին ստեղծված <<Բնանկար. Մեղրի>> աշխատանքը կատարված է տարածական պլանների հստակ բաժանումով: Առաջնամասում պատկերված ընդարձակ կանաչ դաշտին հաջորդում է Մեղրի քաղաքի համայնապատկերը՝ շինություններով և եկեղեցով: Համայնապատկերին Եսայանը փոքր տեղ է հատկացրել, այստեղ առարկաների գծագրվածությունն ինչ-որ չափով կորցրել է իր հստակությունը: Ետնամասում փռված են Մեղրու անառիկ ժայռերի գեղատեսիլ զանգվածները, որոնց տեսքը առնականություն է տալիս տեղանքին: Նկարիչն ընդգծել է դրանց հզոր ուժը: Եսայանը շեշտել է պատկերի ընդհանուր ծավալայնությունը: Այստեղ նկարիչը հասել է հեռանկարային տարածականության հաղորդման:

Եսայանի ստեղծագործության մեջ իրենց ուրույն տեղն ունեն Սևանը ներկայացնող բնանկարները: Իր սերնդակիցներից ոչ ոք այնպիսի ջերմ սիրով չի վերաբերվել այս լճին, ինչպես որ Եսայանը[7]: Նկարչի՝ Սևանը պատկերող բնանկարները մոնումենտալ լուծմանը պատկանող, դեպի էպիկականը ձգտող գործեր են: Ուշագրավ են հատկապես <<Սևանի ժայռերը>> (1956) բացահայտ մոնումենտալ լուծմամբ նկարված, ծանրակշիռ նյութականությամբ աչքի ընկնող բնանկարը, <<Սևանի նարնջագույն ժայռերը>> (1963) բնանկարը և <<Արևամուտը Սևանում>> (1972) ստեղծագործությունը: <<Սևանի նարնջագույն ժայռերը>> բնանկարը դեպի էպիկականը ձգտող գործ է՝ արված լայն գունաբծերով, լույսի ու ստվերների համադրությամբ: Եսայանը չի մոռացել հորինվածքի աջ և ձախ հատվածների մեջտեղում, ժայռերի արանքում տեղադրել իր կողմից այնքան սիրված մոտիվի՝ ծաղիկների պատկերները, որոնք առաջին հայացքից կարող են թվալ ավելորդ հավելում, մանավանդ որ շատ փոքր չափի են, սակայն դա միայն առաջին հայացքից: Նկարիչը հակադրել է այդ քնքուշ ծաղիկները հզոր ժայռերին: Բնանկարն ունի դեկորատիվ հնչողություն, որով էլ այն մոտենում է Սարյանի մի շարք աշխատանքներին[8]: Կարծում ենք, Եսայանն այս բնանկարն ստեղծելիս

[7] Տե՛ս **Калантар К.**, Пейзажист Хачатур Есаян - «Коммунист», Ереван, 1955, 13 ноября, стр. 3.

[8] Վարպետի նկարներում նույնպես տեսնում ենք վառ կապույտի և դեղնանարնջագույնի համադրությունը:

գունային առումով ազդվել է Ս. Առաքելյանի <<Առաքելոց եկեղեցին. Սևան>> աշխատանքից:

Այսպիսով, ի տարբերություն այլ հայ նկարիչների՝ Գ. Բաշինջաղյանի, Ե. Թադևոսյանի, Փ. Թերլեմեզյանի և այլոց, Եսայանն իր Սևանը ներկայացնող գործերում շեշտը չի դրել լճի պատկերման վրա, այլ ուշադրություն է դարձրել ժայռերի կերպարներին՝ ընդգծելով դրանց հզորությունը:

Այսպիսով, իր ստեղծագործության մեջ Խ. Եսայանը մեծ տեղ է հատկացրել Հայաստանի բնաշխարհին, իր նկարների միջոցով օտարներին ճանաչել տվել մեր երկրի բնության գեղատեսիլ վայրերը:

Խաչատուր Եսայանն իր կյանքի ընթացքում բազմիցս ճանապարհորդել է Եվրոպայի տարբեր երկրներում, եղել մի շարք քաղաքներում: 1958-ին նկարիչն ուղևորվել է Ռումինիա, 1960-ին, 1972-ին և 1976-ին՝ Ֆրանսիա, 1961-ին՝ Իտալիա, Հունաստան, Թուրքիա, 1963-ին՝ Մեծ Բրիտանիա: Այդ ուղևորությունների ընթացքում նա կտավին է դրոշմել եվրոպական բնության հրաշագեղ տեսարանները: Այս աշխատանքները տպավորիչ են իրենց կոլորիտով, ռիթմով, ֆակտուրայով: Այս բնանկարներում Խաչատուր Եսայանը հիմնականում ներկայացրել է բնական միջավայրի հետ ներդաշնակորեն կապված ճարտարապետական հուշարձաններ: Մի խոսքով, նա ներկայացրել է բնությունը՝ մարդու կողմից ստեղծված հոյակապ կերտվածքներով:

Այս եվրոպական նկարներից առավել նշանավորը ռումինական ու ֆրանսիական բնապատկերների շարքերն են:

Ռումինական բնանկարներում ներկայացված են Բուխարեստի և մյուս քաղաքների տեսարժան վայրերը[9]: Անկասկած, Ռումինիայի բնապատկերների գեղեցկությունները հայտնաբերելուն Եսայանին օգնել են հայրենի լեռնաշխարհի գեղեցկությունները: <<Օրինակ՝ Բուխարեստի հյուրանոցի պատուհանից անձրևոտ քաղաքը դիտելիս ու պատկերելիս, նկարիչը, հավանաբար, կրկին անգամ է վերապրել երևանյան անձրևների հմայքը>>[10]:

Շարքի, թերևս ամենահաջողված ու հայտնի աշխատանքը <<Հանրապետության հրապարակը Բուխարեստում>> քաղաքային

---

[9] Հայ նկարիչներից ռումինական բնանկարների հետաքրքիր շարք ունի նաև Բարթուղ Վարդանյանը, որը ևս ներկայացրել է Բուխարեստն իր շրջակայքով, փողոցներով, հայտնի թաղամասերով, եկեղեցիներով:

[10] **Վարդանյան Ա.**, Երկու հետաքրքիր ցուցահանդես- << Լրաբեր>>, Նյու Յորք, 1967, 12 օգոստոսի, էջ 1:

բնանկարն է (1958): Այն նուրբ և քնարական շնչով է արված: Օդով ու շարժումով է լի այս հիանալի գործը, մակերեսն այստեղ թվում է երերուն: Աշխատանքը հիմնականում կատարված է գորշ արծաթավուն, կապտավուն երանգներով: Գունային միապաղաղությունը կոտրելու են գալիս ծառերի դեղնականաչ տոները: Նկարիչն ստեղծել է ընդարձակ հեռանկար, որը թողնում է այնպիսի տպավորություն, որպիսին մարդ ստանում է իրական պատկերից: Այս աշխատանքում զգացվում է ֆրանսիացի նկարիչ Կամիլ Պիսարոյի ազդեցությունը:

Բանաստեղծականությամբ հագեցած աշխատանք է <<Երեկոն>> (1958): Այն ծառերով հատկանշված տեսարան է: Ներկայացված է Բուխարեստի մի փոքրիկ անկյուն՝ դիտված իրիկնամուտի պահին: Կոմպոզիցիայում նկարիչը հաճույքով ներմուծել է ճարտարապետությունը. դեղնավուն ծառերի արանքից երևում է կառույցը՝ պարուրված իրիկնային շղարշով: Եսայանը գտել է ներդաշնակություն, համաձայնեցրել բոլոր մոտիվները, նույնիսկ եթե դրանք առաջին հայացքից թվում են ան-համատեղելի: Հորինվածքի բոլոր բաղկացուցիչ մասերն այստեղ տոգորված են ռիթմով: Նկարն արված է հաստ, երկար, տեղ-տեղ էլ՝ մանր ու կարճ վրձնահարվածներով:

Շարքի ստեղծագործություններից են նաև << Հնադարյան եկեղեցի Սիրբիում>>, <<Թագավորական պալատ Սինայայում>>[11], <<Առավոտ. Բուխարեստ>>, <<Եպիսկոպոսների փողոցը Բուխարեստում>>, << Չերտեզե գյուղը Ռումինիայում>> <<Կաթողիկեն Կլուժում>> (բոլորը՝ 1958) և այլն:

Ֆրանսիա կատարած այցելությունների ընթացքում նկարած բնա-պատկերների մեծ մասը ներկայացնում է Փարիզը՝ իր չքնաղ ճարտարապե-տական կոթողներով, բուլվարներով, Նոտր Դամով: Փարիզը պատկերող այս բնանկարներն ինչ-որ չափով հիշեցնում են Կլոդ Մոնեի և Կամիլ Պիսարոյի փարիզյան տեսարանները: Վերջիններիս պես Եսայանը պատկերել է ֆրանսիական եկեղեցիներն օրվա տարբեր ժամերին, ներկայացրել միևնույն տեսարանը տարբեր պահերին, տարբեր կետերից: Ինքը՝ նկարիչը խոստովանել է, որ իր համար դժվար է Փարիզը նկարելը, քանի որ հեշտ չէ ազատվել ֆրանսիացի նկարիչների ստեղծած բնապատկերների ազդեցությունից, որոնք կարծես թե սպառել են ամեն

[11] Սինայան լեռնային մի փոքրիկ քաղաք է Ռումինիայում: Քաղաքն իր անվանումն ստացել է Սինայա վանքից, որի շուրջ և այն ձևավորվել է:

ինչ[12]: Սակայն, պետք է նշել, որ ի վերջո յուրաքանչյուր արվեստագետ յուրովի է վերարտադրում տեսածն ու զգացածը:

Յուրօրինակ լուծում են ստացել Ֆրանսիայում ստեղծված նրա ծովանկարները՝ <<Կաննի նավահանգիստը>>, <<Կապֆերի կղզին>>, <<Մարսել>>, <<Մարսելի տեսարանը Իֆ կղզուց>>, <<Մենտոն>> (բոլորը՝ 1960 թ.), որոնցում ծովը ներկայանում է խաղաղ, հանգիստ, հանդարտ, անխռով վիճակում: Հատկապես հետաքրքիր է <<Կաննի նավահանգիստը>> էտյուդային բնույթի նկարը, որն ինչ-որ չափով առնչվում է Կլոդ Մոնեի ծովային որոշ տեսարանների հետ՝ ջրի ալիքների մշակման մեթոդով:

Տարբեր տարիներին իր Ֆրանսիա կատարած այցելությունների ժամանակ Եսայանն անդրադարձել է Փարիզում գտնվող Տիրամոր հայտնի տաճարին: Ուշագրավ է 1960-ին ստեղծված <<Փարիզի Աստվածամոր տաճարը>> վերնագրով նկարը: Գոթական ճարտարապետության գլուխգործոցը ներկայացված է իրեն շրջապատող միջավայրով, ծառերով, անցորդների ամբոխով: Մարդիկ պատկերված են տարածության մեջ շատ փոքր չափերով, նրանց ֆիգուրները վերածված են մանր կետերի: Եսայանը ներկայացրել է եկեղեցին ամենայն մանրամասնությամբ, մեծ հմտությամբ պատկերել շինության գլխավոր մուտքի առաջին հարկի սլաքաձև և երկրորդ հարկի կոր կամարները, երկրորդ հարկաբաժնի կենտրոնում գտնվող վարդյակ-պատուհանը, խորություններն ու հարթությունները, գոթական ճարտարպետությանը բնորոշ տարբեր մանրամասներ՝ հարազատ մնալով հուշարձանի ճշգրտությանը:

Տպավորիչ է <<Կլոդ Մոնեի տունը. Ժիվերնի>> բնանկարը (1976): Ներկայացված են Մոնեի տունն ու պարտեզը: Հարուստ բնաշխարհով շրջապատված առանձնատունը տեղ է գտել նկարի միջին հատվածում: Ետնամասում պատկերված են սարեր: Այս բոլոր տարրերն իրենց արտացոլումն են գտել առաջնամասում ներկայացված լճակի մակերեսին: Տան, լճակի ափին պատկերված ծաղիկների, շրջակա բուսական աշխարհի անդրադարձումը ջրում Եսայանի կողմից արված է շատ վարպետորեն ու բնականորեն: Բնանկարում տունը և բնությունը ներկայացնում են մի միաձույլ ամբողջականություն:

Շարքի հայտնի աշխատանքներից են նաև <<Ջրաղացներ Տրիանոնում>> (1960), <<Փողոց Բարբիզոնում>>, (1972), <Վանսենի անտառը>> (1972), <<Սիտե կղզին>> (1972), <<Սենա գետը>> (1976), <<Էտրետայի ժայռերը>> (1976) և այլն:

---

[12] Տե՛ս **Եսայան Խ.**, Ֆրանսիական էտյուդներ- <<Սովետական Հայաստան>>, Երևան, 1977, № 7, էջ 29:

Այսպիոսվ, Եսայանի ռումինական, ֆրանսիական և եվրոպական այլ քաղաքներում կատարված գործերը վկայում են հեղինակի գեղանկարչական բարձր ճաշակի մասին: Այս տեսարանները դիտողին հաղորդում են զգացումի այն անմիջականությունը, որով ինքը՝ նկարիչն է ապրել:

Խաչատուր Եսայան արվեստագետն իր պատվավոր տեղն է զբաղեցնում 20-րդ դ. լավագույն հայ բնանկարիչների շարքում: Նրա թողած ժառանգությունը խորհրդահայ կերպարվեստի անքակտելի մասն է:

Ս. Մանուչարյան

Բնանկարի ժանրը Խաչատուր Եսայանի արվեստում

Ամփոփում

20-րդ դարի հայ նկարիչ Խաչատուր Եսայանն իր բնանկարներում պատկերել է ոչ միայն Հայաստանի, այլ նաև՝ եվրոպական բնության հրաշագեղ տեսարանները: Եվրոպական ճանապարհորդությունների ընթացքում ստեղծված իր բնանկարներում նա ներկայացրել է բնական միջավայրի հետ ներդաշնակորեն կապված ճարտարապետական հուշարձաններ: Եսայանը քաղաքային բնանկարի հիմնադիրներից մեկն է խորհրդահայ կերպարվեստում: Նկարչի բնապատկերների մեծ մասին բնորոշ են թրթռուն օդայնությունը, թափանցիկությունը, գույնի լուսապատկերային մաքրությունը. հատկանիշներ, որոնք հատուկ են իմպրեսիոնիստական գործերին: Նրա որոշ բնանկարներում զուգահեռներ կարելի է գտնել ֆրանսիացի իմպրեսիոնիստների, հատկապես՝ Կամիլ Պիսարոյի, Կլոդ Մոնեի աշխատանքների հետ:

С. Манучарян

Пейзажнный жанр в исскустве Хачатура Есаяна

Резюме

Армянский художник 20-ого века Хачатур Есаян в своих картинах изображает чудесные пейзажи не только Армении, но и Европы. В своих пейзажах, созданных во время европейских путешествий, он представляет гармонично связанные с окружающей средой архитектурные памятники. Есаян один из основателей городского пейзажа в армянском советском изобразительном искусстве. Большую часть пейзажов художника характеризуется воздушностью, прозрачностью, спектральной чистотой красок – качества, которые свойственны импрессионистским работам. В

некоторых его пейзажах можно найти параллели с работами французских импрессионистов (К. Писсарро, К. Моне.)

S. Manucharyan

Landscape genre in KhachaturYesayan's art

Summary

Khachatur Yesayan Armenian artist of the 20th century shows a wonderful landscape of both Armenia and Europe in his paintings. In his landscape paintings created during European travels, he presents architectural monuments harmoniously connected with the natural environment. Yesayan is one of the founders of the urban landscape in the Soviet Armenian fine art. Most of the artist's landscape paintings are characterized by lightness, airiness, transparency, spectral purity of colors- qualities that are typical to impressionistic works. In some of his landscape paintings one can find parallels with the works of the French Impressionists, especially with the works of Camille Pissarro, Claude Monet.